



## ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

### ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ  
գիտական գրադարանի տնօրեն

### ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՅՐԱՐԱՏԻ ԿՈՂՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ- ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Զարայյանների կողմից 1190–1200-ական թվականներին Այրարատի նահանգի ազատագրումը, այսուհետև այդտեղ Այրարատի կողմնակալություն-փոխարքայության հիմնումն ու Վաչուտյաններին հանձնումը<sup>1</sup> նշանակում էր նոր սոցիալ-տնտեսական և իրավական հարաբերությունների հաստատում: Երկրամասը շուրջ մեկուկես դար սեղուկյան լին տակ հեծում էր սահմանված հարկերի ժանրությունից: Ազատագրումից հետո երկրամասում հաստատվեցին նոր իրավահարաբերություններ նաև հարկային քաղաքականության մեջ: Ինչպես նախորդ շրջանի, այնպես էլ ազատագրումից հետո առկա հարկերի մասին տվյալներ չկան: Որոշ հարկատեսակների վերաբերյալ մասնակի տեղեկություններ են պահպանվել ժամանակաշրջանի վիճագրում: Հոդվածում քննարկվում են հարկատեսակների մասին տեղեկությունները:

<sup>1</sup> Տե՛ս **S. Պետրոսյանց**, Զարայյանների անկախ պետականությունը: Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, 2017, 2-3/31–32, էջ 75–83: **Նոյնի**, Այրարատյան կողմնակալության-փոխարքայության հանձնումը Վաչե Ա Վաչուտյանին: Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայագիտական հանդես, 2017, 3/37, էջ 163–170: **Նոյնի**, Քուրոյ Ա. Վաչուտեան: Անձը եւ գործը: Բագմակայական-բանասիրական-գրական հանդէս, Վենետիկ-Ս.Ղազար, 2014, 3–4, էջ 161–169: **Նոյնի**, Այրարատյան կողմնակալություն-փոխարքայության հոգևոր կենտրոնները, «Էջմիածին», 2017, Զ, էջ 43–57: **Նոյնի**, Սաղմոսավանքի գրացուցակի գրվելու ժամանակը, «Լրաբեր հաս. գիտ.», 1981, 1, էջ 82–84: **Նոյնի**, Վաչուտյան իշխանական տան տոհմածառը, «Բանքեր Երևանի համալսարանի», 1981, 3, էջ 130–147: **Նոյնի**, Թեղենյաց վանքը և նրա առաջնորդները, «Էջմիածին», 1977, Ը, էջ 48–51: **Նոյնի**, Վաչուտյանների իշխանական տան Եկեղեցաշինական գործունեությունը, «Էջմիածին», 1977, թ-ժ, էջ 84–86: **Նոյնի**, Աստվածածնկալի վանքը, «Էջմիածին», 1978, Գ, էջ 57–61: **Նոյնի**, Սաղմոսավանք, «Էջմիածին», 1981, Դ, էջ 55–58:

**Հիմնաբառեր.** Զաքարյան Հայաստան, Այրարատի փոխարքայություն, Զաքարե Բ, Վաչուտյաններ, Վաչե Ա, Քուրդ Ա, Միհրապ Գոշ, Փարափի, Հովհաննավանք, Օշական, Կարբի, հարկեր, հարկերի զիջում

JEL: Y8, Y80, Y9

Զաքարյանները, ապա նաև Վաչուտյանները, Այրարատի կողմնակալություն-փոխարքայության տարածքի բնակչության վիճակը թերևացնելու նպատակով, որոշ չափով պակասեցրել, երբեմն էլ զիջել են գանձվող հարկերը:

Նման առաջին ակտը, անշուշտ, 1191 թ. Փարափի Ծիրանավոր Եկեղեցու պատին փորագրված հրամանագիր-արձանագրությունն է. «Ի թ/ուի/ս Ուս /1191/: Ես՝ Զաքարիա ամիրսպասալար Հայ/նց եւ Կրաց... առի զաշխարհս ի տաճկաց եւ ազատ արարի զՓարպի իրիցանիս յամենայն հարկէ»<sup>2</sup>:

Սելջուկ-թուրքերից երկրամասն ազատագրելուց հետո Զաքարե Բ ամիրսպասալարն անմիջապես Փարափի իրիցանին ազատել է յամենայն հարկէ: Փարափի գյուղում վանական երեք կառույցների մնացորդները թույլ են տալիս նկատել, որ այդտեղ երեցների, քահանաների թիվն այնքան էլ փոքր չի եղել, և որ նրանք գյուղում, ինչպես նաև շրջակայքում ունեցել են այգիներ, բանջարանոցներ, հասութաբեր հաստատություններ, որոնք նույնպես քաղաքական անբարենպաստ ժամանակներում հարկադրվել էին նվաճողների կողմից, և ահա Զաքարե Բ-ն Եկեղեցու սպասավորներին բոլոր կարգի հարկերից ազատել է:

Թշնամու կողմից երկրամասի բնակչության կեղեքումը պատկերավոր «ի ծանր լծո» բարերով է ներկայացնում Զաքարե Բ ամիրսպասալարը Հովհաննավանքի 1200 թ. արձանագրության մեջ: Նրա հրամանով փորագրվել է. «...եւ ի թուականութեան...Ուսթ /1200/: Մե/ն/ք՝ Եղբարքս հարազատք՝ Զաքարիա եւ Խանէ, որդիք մեծին Սարգսի, որդո աւագ Զաքարիահ, յորժան ծագեաց լոյս շնորհացն Ա/ստուծոյ/ եւ այց արար աշխարհիս Հայ/նց և /զ/արացոյց զտկարութի/ւն/ մեր ի մարտ պատերազմի ընդդեմ թշնամեաց խաչին թ/րիստոս/ի, եւ ելոյծ զզարութի/ւն/ նոցա եւ զվաղընջուց բռնութի/ւն/ն, եւ ազատեցաւ երկիրս Ա/յ/րարատու ի ծանր լծո ծառա/յ/ութե/ան/ նոցա, կամեցաք սակաւ ինչ նշան ընծա/յ/ից եւ տուրք շնորհի տուաք ի Ս/ուր/բ Կարապետս՝ ի վանս Յովհաննու եւ տուաք զգեղն Որդկան եւ զՏաճկամարգ, եւ ազատեցաք զամենայն հայրենիք ուր եւ իցէ ի գաւառիս՝ էթէ այգի, էթէ հող սոց»<sup>3</sup>:

Զաքարե Բ-ն, Հովհաննավանքին տված ընծաների՝ երկու գյուղերի հետ միասին, հարկերից ազատել է գավառի տարրեր մասերում գտնվող Եկեղեցու բոլոր կալվածքները:

1200-ական թվականների սկզբին Զաքարե Բ-ն մի արձանագրություն-արտոնագիր էլ փորագրել է Կոչի Սուլը Ստեփանոս Եկեղեցու հարավային, ծորահայաց պատին, բարձրուստ: Արձանագրության կարևորությունից Ելելով՝ մեջ ենք բերում ամբողջությամբ. «Ես՝ ամիրսպասալար Զաքարիա և Խանէ... առաք զերկիրս Հայոց... եւ տուաք ի սուրբ ուխտիս գլուճկոր՝ իւր

<sup>2</sup> Ա.Ն. Շահինյան, Կոչի կոթողը և նրա արձանագրությունը, Պատմա-բանասիրական հանդես, 1968, թիվ 2, էջ 199:

<sup>3</sup> Կ. Ղաֆարարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Եր., 1948, էջ 76:

ջրովն եւ հանդովն եւ լերամբ, եւ դաշտուն, եւ վերստին դարձուցաք ի ս/ուր/թ եկեղեցիս եւ աղբիւրն Աւանա: Եւ զինչ հայրէնիք կա գաւառիս ազատ յամենայն յարկէ եւ հաստատեցաք հայրենիք սնա եւ հոգեւոր գաւակաց, որ առ յաւիտեան»<sup>4</sup>:

Արծանագրության մեջ հետաքրքրող բաժինը կազմված է երեք իրավական-արտոնագրային հասկացություններից:

1. **Նվիրատվություն.** Զաքարյանները Սուլը Ստեփանոսին են նվիրել Խոճկոր բնակավայրը՝ իր դաշտով, սարով ու ջրով:
2. **Վերադարձ.** Սուլը Ստեփանոսին են վերադարձել Ավանի աղբյուրների ջուրը:
3. **Հարկային.** Սուլը Ստեփանոսի բոլոր նախկին ունեցած հողային կավածքները վերահաստատվել են ու ազատվել հարկերից:

1214–1218 թվականների ընթացքում նույն Կոչ գյուղում Իվանե Ա Զաքարյանը եկեղեցի է կառուցել և հարավային պատի արևելյան անկյունում վրացերեն արծանագրություն փորագրել: Սա արտոնագիր է. դրանով Իվանե Ա-ն թերևացրել է որոշ հարկեր: Ահա արծանագրության այդ մասը. «.... թողինք ձեր՝ կոշեցիների վերին /հանդա/սահմանի շարհաթը, և վարի /հանդա/սահմանից՝ միայն ցորենի դալայից է ազատված կոշեցի մարդը: Եվ դուք սահմանեցիք, որ մեկ արոր ձեր եղով ու իր սարքով մշտապես մեզ համար լինի»<sup>5</sup>:

Այրարատի փոխարքայության հայրենի /սեփական/ տիրույթներում տարբեր ժամանակներում հարկային գիշումներ են արել նաև Վաչուտյանները:

Կարբի գյուղի դիմաց՝ ձորի մյուս ափին գտնվող բերդում, փոխարքայի պաշտոնը ստանձնելու առթիվ, Քուլը Ա Վաչուտյանը կնոջ՝ Խորիշակի հետ 1235-ին խաչքար է կանգնեցրել, որի պատվանդանին արծանագրել է. «... ի թուի/ն/ ՌԶԴ /1235/, յիշխանութե/ան/ Շահնշահի, որդո Զաքարիահ, ես՝ Քուլը, Վաչէ/ի որդի/ եւ ամուսին իմ Խորիշահ ... շարես առա ... վասն փրկութե/ան/ հոգոց մեր/ng/ եւ վասն կենաց որդոց մեր»<sup>6</sup>:

Կարբիի հաղթականար-զանգակատան հարավային պատին, արտաքուստ, 1343-ին փորագրվել է Վաչուտյան տոհմի վերջին իշխանաց իշխան թեոյդոս Չրքինի հրամանագիրը, որ խիստ կարևոր է ինչպես փորագրվելու շարժաթիթի, այնպես էլ այդ ժամանակաշրջանի հարկային քաղաքականության ուսումնասիրության առումով: Արտոնագիր-հրամանագիրը հայտնում է. «Ես՝ Չրքինս, որդի Քրդին, տէր Անբերդո գաւառի անիրաւունք տէսա, որ զՃանապարհորդի ծիաւլախ տախն: ՄԵ/ն/թ զայս արծան գրեցաք, որ այլ ի Կարբի ճանապորդի ծիաւլախ չտան: ... ԹՎ/ին/ ՉՂԲ /1343/»<sup>7</sup>: Զիալվահը մոնղոլական շրջանի հարկային պարտույթ էր, որն արտահայտել է մոնղոլական սուրիանութերին, հարկահավաքներին, արտօնյալ վաճառականներին ծիերով, պարենամթերքով, օթևանով, ճանապարհի պաշարով ապահովելը: Հայկական վիճագիր արծանագրություններում և մատենագրության մեջ հարկային այս պարտույթի հիշատակությունն առաջին և միակ դեպքն է:

Արտոնագրի՝ Կարբիուն փորագրվելու հանգանանքը հուշում է, որ այն, լինելով Արարատյան դաշտ-Վրաստան առևտրատնտեսական ամենակա-

<sup>4</sup> Պ. Մուրայյան, Հայաստանի վրացերեն արծանագրությունները, Եր., 1977, էջ 106–107:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 101:

<sup>6</sup> Մեր հավաքածոյից:

<sup>7</sup> Ս. Ավագյան, Վիճական արծանագրությունների բառաքննություն, Եր., 1978, էջ 195:

րևոր ճանապարհի վրա, միաժամանակ կատարել է փոստակայանի դեր: Եվ Թեոյդոս Չրքին 1343 թ. արտոնագրով վերացրել է իլխանության՝ արդեն հարյուրամյակից ավելի ժամանակաշրջանում գործող պարտույթը: Այս փաստը գալիս է հաստատելու նաև, որ իլխանության կենտրոնական իշխանությունը 14-րդ դարի կեսերին այն աստիճան էր սպառել իրեն, որ ծայրանաւերում արդեն ոչ միայն չէին կատարում պետական իրամանմերը, այլև դրանք ուղղակի վերացնում էին: Ամենայն հավանականությամբ, Վաչուտյանների կողմնակալություն-փոխարքայության տարածքում միայն Կարբիում չէ, որ եղել են փոստակայաններ: Եվ Թեոյդոս Չրքինի իրամանը հավասարապես վերաբերել է իրեն ենթակա ամբողջ տարածքին:

Զաքարյան Հայաստանում գյուղացիությունն ամրացվեց հողին և հողի հետ միասին դարձավ հողատեր-իշխան-ֆեոդալի սեփականությունը: Սոցիալ-իրավական այս ինստիտուտը թեև բնորոշ է Ճորտատիրությանը, սակայն, ինչպես իրավացիորեն նշել է պատմաբան Գ.Գրիգորյանը, 13-14-րդ դարերում Հայաստանում հաստատված կացութածն իր առանձնահատկություններով տարբերվել է դասական ճորտատիրական կարգից: Տիրող ձեզ եղել է Ճորտ-ծառաների ինստիտուտը, որը հարատևել է նաև հետագա դարերում<sup>8</sup>:

Հովհաննավանքի 1200 թ. արտոնագրով Զաքարե Բ-ն Եկեղեցուն է նվիրել Որդկան և Տաճկամարգ գյուղերը: Պետք է հասկանալ, որ այդ գյուղերը Հովհաննավանքին են նվիրվել իրենց բնակչությամբ, եկամտով, հասույթի հարկի, պարտույթի ամբողջ իրավունքով<sup>9</sup>: 1283 թ. Հասան Վաչուտյանի անունից փորագրված կտակ-արձանագրությունից պարզ է դառնում, որ «.... Եւ զՈրդկան, որ սեփական հայրենիք էր Եկեղեցոյս, Եւ ի դառն բերմանց ժամանակաց էլել էր ի վաճացս, բազում աշխատութեամք Եւ յորով ծախիք դարձուցաք ի ս/ուր/թ ուխտս»<sup>10</sup>: Այս նույն արձանագրությամբ Հասանի եղբայր Դավիթ Բ-ն, որ առաջինի կտակով դարձել էր իշխանության ահակալ, Հովհաննավանքին Հասանի և իր անունից նվիրել է «զմեր գանձագին գեղն զՎարիամագեղ և զՂամազանցն իրենց ամէն հողով ու ջրով և բնորդի մարդկաւք»<sup>11</sup>: Այս դեպքում նաև շեշտվել է, որ գյուղերը նվիրաբերվել են իրենց բնակչությունի հանդերձ:

Երբեմն նվիրաբերված գյուղերը դուրս էին գալիս նվերն ստացողի իշխանությունից, նույնիսկ խվարում էին գերազույն իշխանության ներկայացուցիչների, նրանց ժառանգների կողմից: Սաղմոսավանքի 1215 թ. շինարարական արձանագրության մեջ Վաչե Ա-ն հայտնել է, որ «ողորմածութեամբ պատրոնին տվաք զգեղն Աղկունծ ի ս/ուր/թ Սիոն Սաղմոսավանաց»<sup>12</sup>: Սակայն տարիներ հետո Եկեղեցու իրավասությունից այն անցել է գերազույն իշխանակոր Շահնշահ Ա-ի որդի Խվանե Բ-ին: Եվ 1261-62 թվականներին փորագրված Վաչե Բ-ի կտակ-արձանագրությունից պարզվում է, որ Վաչե Ա-ի «ողորմածութեամբ պատրոնին» նախադասությունը բնավ էլ պատրոնի «ողորմածութեամբ» /թույլտվությամբ/ իմաստ չի արտահայտում, այլ նշանակում է պատրոնից գնված, ասել է թե՝ Վաչե Ա-ն Աղկունծ գյուղը Զաքարե Բ-ից կամ նրա հաջորդներից /1215-ին Զաքարե Բ-ն արդեն մեռած էր/ գնել և

<sup>8</sup> Տես Գ.Ս. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք /13-14-րդ դարեր/, Եր., 1981, էջ 155:

<sup>9</sup> Տես Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 76:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Մեր հավաքածոյից:

նվիրել է Սաղմոսավանքին: Ահա այդ փաստը հաստատող Վաչե Բ-ի արձանագրության համապատասխան հատվածը. «....եւ զմեցին յընչից իմոց ԺՈ/10.000/ սպիտակի զԱլկուն յիվանէտ, յորդո Շահնշահի... զոր յառաջ պապն իմ Վաչէ զնել էր ի մեծ սպարապետ Զաքարէտ եւ գրել ի դուռն Եկեղեցւոյս, զոր խափանել էր ի չար պատահմանց ելել ի վերա աշխարհիս»<sup>13</sup>: Այսպիսով՝ Զաքարէ Բ-ից գնած և Սաղմոսավանքին նվիրված Ալկունծ գյուղը հարկ է լինում դարձյալ 10.000 սպիտակով /արժաքով/ զնել Զաքարէ Բ-ի թու իվանե Բ-ից, որը, ամենայն հավանականությամբ, օգտվելով Երկրում տիրող խառնակ իրավիճակից, կրկին տիրել էր Ալկունժին: Հատկանշական է, որ Վաչե Բ-ի կտակ-արձանագրությամբ Սաղմոսավանքին տրվել է նաև «զըտունն Տորողնոնց ի Կարբի իւր հայրենիքն՝ Ետուն յիմ քնարանս»<sup>14</sup>: Այս դեպքում արդեն ոչ թե ամբողջ գյուղ է նվիրաբերվել Եկեղեցուն, այլ Կարբիի բնակիչ Տորողնոնց գերդաստանն իր հայրենիքով, այսինքն՝ ամբողջ ունեցվածքով հանդերձ:

1244 թ. կառուցելով Աստվածընկալի Կաթողիկե Եկեղեցին՝ Քուրդ Ա Կաչուտյանը և Խորիշահ իշխանուիին այլևայլ նվերների թվում Եկեղեցուն տվել են նաև «Ա: շինական, :Գ: ողջատուն»: Մեկ շինականի նվիրատվությունը հասկանալի է, իսկ ինչ է նշանակում 3 ողջատունը: Վիմագրագետ Ս. Ավագյանը վիմագրական տվյալների համադությամբ պարզել է, որ ինչպես ողջատունը, այնպես էլ այլուր հիշատակվող «շինականատունը», «լմնածուխը» նշանակում են ձորտ շինականի տուն, գերդաստան<sup>15</sup>:

1300 թ. Հոնայի որդի հեծուա Դավիթը Հովհաննավանքին տված նվերների թվում ավելացրել է նաև «շինական ի շինութիւն/ Զորի գեղին, զԱւետին՝ մականուն Կոնկիկ»<sup>16</sup>: Ավետիսի նվիրատվությունը, փաստորեն, կատարվել է նույն տարիներին՝ Քասաղի ծորում շինարարությամբ, Եկեղեցու, բնակելի խցերի կառուցմանը մասնակցելու համար:

13-րդ դարի կեսերին, բոլոր դեպքերում, մինչև Հովհաննավանքի գավթի կառուցումը /մինչև 1247-1248 թվականները/, Կաթողիկե Եկեղեցու ներսում, հյուսիսային պատին փորագրվել է. «.... Ես՝ Մարուկս եւ Մխիթարիչս տուաք զմեր Կովաղագին եւ զԲշտունց տներն ի ս/ուր/բս»<sup>17</sup>: Մարուկն ու Մխիթարիչը Հովհաննավանքին նվիրել են Երկու տուն, սակայն դժվար է պնդել՝ բնակիչների թե առանց բնակիչների:

Այրարատի կողմնակալություն-փոխարքայության տարածքում, ինչպես ամբողջ Զաքարյան Հայաստանում բնակչությունը, ամձնական իրավունքների սահմանափակմանը գուգահեռ, տնտեսական շահագործման էր Ենթարկվում: Բավկական է դիտարկել Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» Երկրորդ մասի առաջին հատվածը՝ համոզվելու համար, թե բնակչության շահագործումն ինչ չափերի էր հասել, և օրենսդիրն ինչպես է փորձել որոշակիորեն կարգավորել տեր և ծառա, շահագործող և շահագործվող դասակարգերի իրավահարաբերությունները: Նա գրել է. «Զանդաստանացն զիհնգերորդ մասն առցեն, որպէս Յովսէփ աւրինադրեաց յԵղիպոս ... Սոյնակս եւ այժմ լիցի, զի արծաթազին անդաստան, եւ այգեստան, եւ բուրաստան մի լիցին ընդ հարկաւ հնգելին, նմանապէս՝ ջրաղաց եւ տուն: Այլ թէ բնակիչքն ընդ

<sup>13</sup> Մեր հավաքածոյից:

<sup>14</sup> Մեր հավաքածոյից:

<sup>15</sup> Տես Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 83:

<sup>16</sup> Տես Կ. Ղաֆարարյան, նշվ. աշխ., էջ 83:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 85-86:

արուեստի եւ կամ ընդ վաճառի հարկիցեն, զի ոչ է հարկ գլխոյ քրիստոնեից, բայց այլազգեաց, յորժամ բռնի ընդ հարկաւ արեսցեն:

Բայց անդաստանք ջրարբիք լիցին ընդ հնգեկաւ, այլ ոստինք՝ տասանորդեսցին, զի հող միայն է իշխանի եւ թագաւորի եւ ոչ ջուր: Սոյնպէս՝ ոստինք, այգիք եւ ծառաստանք:

Այսպէս եւ յաւուրս շաբաթի յեւթնէն մին գործիցէ իշխանի եւ տէրունի, այլ աւելի աշխատելն զձեռամբ անկեալն անիրաւութիւն մեծ է:

Եզին առանձինն այլ հարկ մի լիցի, զի այն իսկ է, զոր աշխատեալ հնգեկի:

Կովու լիտր եղն միայն լիցի:

Արաւտի հարկ այլ մի լիցի, զի այն իսկ են արաւտականք, որ հարկին:

Ոչխարք ի գարինսն տասանորդեսցին. թէ հաճոյ իցէ տէրունեանցն ընդ ոչխարի փոխանակիցէ ըստ արժանաւոյն:

Զիոյ, եւ ջորուոյ, եւ իշոյ մի լիցի հարկ, զի նոքաւք բազում անզամ ծառայէ գտէրունիսն»<sup>18</sup>:

Վերը բերված ընդարձակ հատվածից հետևում է, որ օրենսդիրը տերեւին պարտավորեցել է ջրովի, բարեբեր հողերի պարագայում գանձել գյուղացու եկամտի մեկ հինգերորդը, իսկ անջրդի հողերի դեպքում՝ մեկ տասներորդը, յուրաքանչյուր կովի համար ստանալ մեկ լիտր յուղ, տասը ոչխարից վերցնել մեկը: Միաժամանակ սահմանում է, որ գյուղացին իր բանող անստուններով արքունիքի /գտէրունիսն/ և անմիջական տիրոջ օգտին աշխատի մեկ օր:

Սխիթար Գոշի հիշատակած լիտրն այժմյան կշռով պետք է հաշվել 408 գրամ<sup>19</sup>:

Վիմագրական ու մատենագրական տվյալներով՝ գյուղացին վճարել է շարիատ /լայն առումով՝ հողային տուրք, ֆեռդալին բնարդյունքով վճարված տուրք, նեղ առումով՝ հացահատիկից բնարդյունքով վճարվելիք բերքի 1/10 մասը/, իսլա /այգեգործությունից բնարդյունքով վճարված տուրք/, բեկար /Զաքարյաններին տրվող եկամտահարկ/ և այլն<sup>20</sup>:

Զաքարյանների արքունիքի և տեղական իշխանների կողմից հովանավորվող վանքերն ու եկեղեցիները դարձել են ժամանակի խոշոր հողատերեր՝ ստանալով այն բոլոր հարկերն ու տուրքերը, ինչ՝ աշխարհիկ տերերը:

Այրարատի փոխարքայության տարածքում կիրառվող հարկերի չափերի մասին Զաքարյան պետության շրջանից հիշատակություններ չունենք:

Փորձենք այլ ժամանակահատվածի տվյալներով պարզել հարկային քաղաքականության բովանդակությունը:

1026-ին Անբերդի եկեղեցու բարավորին Վահրամ Պահլավունու փորագրած հրամանագրով սահմանվել են նորահաստատ եպիսկոպոսական աթոռի հասույթները Նիգ-Արագածոտնից, որ գրեթե անբողջությամբ համապատասխանում էր Վաչուտյանների հայրենի /սեփական/ իշխանության տարածքին: Արձանագրությունը մեջ ենք բերում անբողջությամբ. «Յամին ՆՀԵ /1026/: Ես՝ իշխանս Վահրամ, շինեցի գԿաթողիկես աթոռ հայ/րապետական

<sup>18</sup> Սխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ՝ Խոսրով Թորոսյանի, Եր., 1975, էջ 31–32:

<sup>19</sup> Տես Հ. Մանանյան, Նյուրեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, հ. 2, 1928, էջ 17:

<sup>20</sup> Տես Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13-14-րդ դարերում, Եր., 1964, էջ 435–436:

Եւ սահմանեցի պտուղ Նիգի տունն :Բ: կապիճ ցորեան, յԱրագածոտնե յէգին :Բ: փասզի, ի Քաղքողաչտի բաբակն :Ժ: լիտր: Յէրէցն :Ա: դահեկան յիւրո և ի կնոչէ, :Գ: դահեկան հողադրամ, ծեռնադրել է :Դ: ՅԱնբերդի պտուղ տունն :Դ: կապիճ ցորեան, :Ա: կտաւահատ: Այլ տուաք զօղացն վերա կարմնձին: Ի պսակի :Գ: դահեկան, հողադրամ, կնքադրամ, տնաւրիներ»<sup>21</sup>:

Այստեղ հականե-հանվանե թվարկվել են ժամանակի գրեթե բոլոր պարտույթները, միաժամանակ նշվել են եպիսկոպոսական թեմին տրվելիք հարկերի չափերը: Լեռնային Նիգ գավառը հիմնականում արտադրել է ցորեն և գյուղատնտեսական կենողանիներ, և, ըստ դրա, գավառի բնակչների պարտույթը նշանակվել է **Երկու կապիճ ցորեն:** Վաղ և քննարկվող ժամանակաշրջանի այլ վկայություններ չկան, բայց այդ փաստը հաստատող ուշ շրջանի վկայություններ կան: 1598 թ. Հանես քարագործ Ապարանի ջրամբարի տակ մնացած բնակավայրում պատրաստել է Գրիգորի տապանաքարը, որի արևելյան լանջին պատկերված է մի գոյզ լծկան եզներով գութան, որի հետևից քայլում են Երկու հողագործ<sup>22</sup>: Նույն քարագործ վարպետը նմանօրինակ աշխատանքային տեսարանով մի տապանաքար էլ պատրաստել է այդտեղից ոչ հետու գտնվող Երնջատափ գյուղում: Բնակատեղին մոտ գտնվող Զովունի գյուղի հին գերեզմանատանը մի տապանաքարի հարավային կողմում պահպանվել է հետևյալ տապանագիրը. «Այս է տապան առն քաջի Եւ բազմացան հողագործի, որ անուամբ Վարդանն ասի: Թվ/ին/ ՈՃԼ /1681/»<sup>23</sup>: Այս արձանագրությունից երևում է, որ, քաջակորով տղամարդ լինելուց բացի, Վարդանը նաև բազմացան հողագործ է եղել: Պետք է նշել նաև, որ առաջն հրատարակված ավելի քան տասը հազար հայերեն վիճագիր արձանագրություններից սա միակն է, որտեղ օգտագործված է **հողագործ** բառը:

Նոյնպիսի լեռնային տարածք, բայց ավելի բարեխառն կիմա ունեցող Անբերդը վճարելու էր արդեն **չորս կապիճ ցորեն** և **մեկ կապիճ կտավատ:**

Հայկական չափագիտության մասնագետ Ռ.Վարդանյանը պարզել է, որ միջնադարից վկայված կապիճ չափակշռային միավորը, որ նոյնական է օտար աղբյուրների փոքր կապիճի հետ, հավասար է նաև գոհկին կամ մողին, այսինքն՝ համապատասխանել է 8,976 կգ-ին կամ 9,872 կգ-ին<sup>24</sup>: Այսպիսով՝ Նիգ գավառի յուրաքանչյուր տուն ցորենի պտղի է տվել  $2x8,976=17,972$  կգ կամ  $2x9,872=19,744$  կգ, իսկ Անբերդի յուրաքանչյուր տունը ցորենի պտղի տվել է  $4x8,976=35,97$  կգ կամ  $4x9,872=39,888$  կգ:

Արագածոտնի դաշտային մասի համար, որ զգում է ներկայիս Աշտարակից մինչև մի կողմից Վաղարշապատով դեպի Արաքս, իսկ մյուս կողմից մինչև Թալինի սահմանը, հիմնական պարտույթը սահմանվել է յուրաքանչյուր այգուց երկու փաս գինի: **Փաս միավորի չափի որոշման համար ելակետային է Եսայի Նշեցու հետևյալ տեղեկությունը.** «Զէր որ տան պտուղ քահանայիցն բանստ մի, որ լինի ի սափորէն, որ է փաս մի, ի տասնէն մինն»<sup>25</sup>: Այստեղից հետևում է, որ փասը հավասար է մեկ սափորի, որի մեծությունը 10 քսեսն է:

<sup>21</sup> Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 17:

<sup>22</sup> Տես S. Պետրոսյանց, Ապարանի շրջանում ստեղծագործած միջնադարյան ճարտարապետներ և քարագործ վարպետներ: «Երիտասարդ գիտաշխատող» /Երևանի պետական համալսարանի հանդես/, 1981, թիվ 1, էջ 174-175:

<sup>23</sup> S. Պետրոսյանց, Զովունիի արձանագրությունները: ՊԲՀ, 1980, 3, էջ 306:

<sup>24</sup> Տես Ս. Ավագյան, Վիճակական պրատուռներ, Եր., 1986, էջ 60:

<sup>25</sup> Եսայի Նշեցի, Սեկնութիւն մարգարելին Եզեկիէլի, Մաշտոցի անվան Մատենադարան, ծեռագիր 3120:

Եվ քանի որ քեստի մոտավոր չափը 532-652 գրամ է, ապա կաս սափորի կշիռն է, համապատասխանաբար, կլինի 5,32-6,52 կիլոգրամ: Փաստորեն, Արագածոտնի յուրաքանչյուր այգուց եկեղեցական թեմին պարտույթ է հասել 2 փաս՝ մոտ 12-13 լիտր գինի:

Արձանագրության թաղողաշտը ներկայիս Վաղարշապատն է իր շրջակայքով: Արագածոտնի այն հատվածը, որ սահմանակցել է Վաղարշապատին, պարտավոր էր վճարել իր հիմնական արտադրանքը՝ տունը 10 լիտր բամբակ: Արձանագրության մեջ հիշված եկեղեցական արարողությունների համար սահմանված այլ վճարումները /պտուղ, հողադրամ, կնքադրամ, ծեռնադրել, տնօրինեք, պսակ/ շուրջ երկու հարյուրամյակ հետո փոխանցվել են Զաքարյան Հայաստանի հարկային համակարգ, իսկ դրանից հետո գոյատևել հետագա դարերում ևս:

Ահա մի օրինակ: Վաչուտյանների Այրարատյան կողմնակալություն-փոխարքայության տարածքում գտնվող Աշտարակում, Կարմրավոր եկեղեցու պարսպի հարավային մուտքի բարավորին 1325 թ. փորագրվել է շինարական-նվիրատվական արձանագրություն, որում հանդիպում է նույն փաս կամ փաս գինի արտահայտությունը՝ որպես եկեղեցու հաղորդության համար տրված պարտույթ: «.... ողորմութեամբ պարոն Աղբուղային եւ Սիրի խաթունին, ես՝ Ասնաւորս եւ Ղուտուլչաքս... շինեցաք զպարհապս, զշջայ-մաղն եւ զդուրն յիշատակ մեզ եւ զաւակի մեր Զաքարի եւ տվի տարէնն :Ժ: փաս գինի ի Թամիրայ այգոյն... Թվ/ին/ 2ՀԴ /1325/»<sup>26</sup>: Ասնավորը և Ղուտալչաքը նախատեսել են Կարմրավոր եկեղեցուն տարեկան հանձնել 10 փաս, այսինքն՝ 54-66 լիտր գինի:

Ասնավորի և Ղուտալչաքի արձանագրության մեջ հիշված թամիր բնակատեղին Տեղերից ոչ հեռու, Արագածի փեշին ընկած պատմական թամիր գյուղատեղն է /ուշ շրջանում՝ Աղթամիր/, ներկայիս Ուկեվազ և Ուկեհատ գյուղերի տարածքը: Թամիրը հիշվել է նաև Տեղերի եկեղեցում 13-րդ դարի կեսերին փորագրված Խնձորիկի նվիրատվական արձանագրության մեջ. «ՂՋԲ /1233/: Ես՝ Խնձորիկս միաբանեցա Ս/ուր/թ ուխտիս Տեղերու եւ ետու յառաջ գին այգին ի Թամիր, եւ յետ իմ մահուան այլ գինչ լինի»<sup>27</sup>, ինչպես նաև Բագնայրի դարձյալ 13-րդ դարի մի նվիրատվական արձանագրությունում. «Ես՝ Ավետիսի եւ Հազարդեղու տուաք... այգին ի Թամիր...»<sup>28</sup>:

Վաչուտյանների փոխարքայությունում պահպանված արձանագրություններում հիշվում են նաև այլ հարկատեսակներ: Աշտարակի Մարինե եկեղեցու պատին 1323 թ. փորագրվել է Զաքարյան Աղբուղա Գ-ի կին Սիրի խաթունի հրամանագիրը, որի համաձայն «Ետու ի սուրբ Մարիամէի միաբանացտունն զՓարպոյ հողին կէսն, որ Այծամանց երկիրն, որ զկէսն Ակոք՝ Ավլարիկի որդին գնել էր ի Թուրանէն, ի Խոսրովէն, ու սուրբ Մարիամէիս տվել, որ զ :Ա: էլ կէսն ես տվի ու ի յամենայն հարկէ ազատեցի: Չունի ոչ ով դաի՞ ոչ չարի, ոչ շարիատի, ոչ էլ մեծ կամ փոքր խարժով զմեր հաստատ

<sup>26</sup> Մեր հավաքածոյից: Արձանագրությունը սխալներով և պակասություններով իրատարակվել է Երվանդ Շահագիզի «Աշտարակի պատմությունը» գրքում, Եր., 1987, էջ 189-190:

<sup>27</sup> Մեր հավաքածոյից: Հրատարակել են Ա. Տեր-Սկրտչյանը /Մի քանի հին արձանագրություններ, 1904, էջ 45/, Ե. Տեր-Սինասյանը /Ամբեղդանորի հնությունները և արձանագրությունները, 1961, «Եղմիածին», Եր., էջ 53/, Ս. Կարապետյանը /Վարձը, 2013, 10, էջ 24/:

<sup>28</sup> Սարգսիս Ա., Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայո, Վենետիկ, 1864, էջ 182: Նաև՝ Հ. Պատնդ Ալիշան, Շիրակ, տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 121:

յիշատակս խաբանել ջանայ... ի թվ/ին/ ԶՀԲ /1323/»<sup>29</sup>: Այս արձանագրության մեջ հիշատակված շարիատ հարկը, արդեն գիտենք՝ կամ հողային տուրք է, կամ հացահատիկից բնարդյունքով վճարվելիք տուրք, իսկ մեծ կամ փողք ինարձը, կորցնելով նախկինում ունեցած գլխահարկ նշանակությունը, մոնղոլական շրջանում ընթանվել է որպես հողային հիմնական հարկատեսակ:

Փարափին բարեեր հողերով ու այգիներով հարուստ բնակավայր էր նաև միջնադարում: Այրարատի առաջին փոխարքա Վաչե Ա Վաչուտյանը 1221 թ. Հարիթի վանքին մի այգի է նվիրել Փարափի գյուղում<sup>30</sup>, նրա որդի Քուրդ Ա Վաչուտյանը 1244-ին Աստվածընկալի Կաթողիկե Եկեղեցուն մեկ այլ այգի է նվիրել նոյն Փարափի գյուղում<sup>31</sup>:

Հոռոմոսի Եկեղեցուն Փարափի գյուղի հյուրատան մոտ գտնվող մեկ այգի 1174 թ. նվիրել են Պետրոս Երեցն ու իր եղբորորդիներ Ազատը, Յուսիկը և Սիմոնը, մեկ մեծ այգի՝ անթվակիր արձանագրությամբ՝ Սարգիս կրոնավորը: Հոռոմոսի անթվակիր ևս մեկ արձանագրությամբ՝ նոյն գյուղի անորոշ հատվածից այգի է նվիրել Բարդուղիմեոս արելամ<sup>32</sup>:

1271 թ. Կոչի մոտ գտնվող Պետրոս Ականատեսի խաչքարի հարավային պատին փորագրվել է Ուքանի արձանագրությունը, իսկ նոյն խաչքարի հյուսային կողին՝ վերը հիշված Աղբուղա Գ-ի բավականին եղծված արձանագրությունը, որոնցով յուրաքանչյուրի հեղինակն արտօնել է որոշակի հարկերի վերացման կամ, գուցե, ժամանակավոր վերացման մասին: Ուքանը գիշել է շահնահակը, Աղբուղա Բ-ն՝ թողի ... հորահակ կտաւն: Պատմաբան Գ. Կարախանյանը շահնահակը համարել է այգիներից և ջուլիակից գանձվող հարկ: Սակայն նրա եզրակացությունը չի հանապատասխանում իրականությանը: Շահնահակն առաջացել է շահնայի՝ հարկահավաք պաշտոնյայի՝ ոստիկանի պաշտոնի անվանումից և գանձվում էր այդ պաշտոնյայի օգտին /հիշվել է նաև Քանաքեռի Պետևանի խաչքարի 1266 թ. և Հռիփսիմեի տաճանի 1296 թ. արձանագրություններում/: Հորահակ կտաւն հարկատեսակը Գ. Կարախանյանի կողմից ճիշտ է մեկնաբանվել և իրոք համապատասխանել է կտավագրությունը գանձվող հարկին<sup>33</sup>:

1352 թ. Հովհաննավանի Կաթողիկե Եկեղեցու ներսում, արևելյան պատին փորագրվել է հետևյալ արձանագրությունը. «Թվ/ին/ ՊԱ /1352/... մե/ն/թ՝ Յոհանայվանից միջաբանք, տ/է/ր Անդրէաս, հայր Աբրահամ, Դաէս, Յովէ, Կարապէտ, այլ միջաբանք տվաք ձիթայիհանից հակէ կէս լիտր ձէթ ս/ուր/թ Կարապէտիս, :Ա: լիտր հասարակաց»<sup>34</sup>: Այս արձանագրությունից պարզվում է, որ միջնադարյան Հայաստանում գյուղուն է ունեցել նաև ձիթանքի հարկ, որ այլուր չի հաստատված: Այդ հարկի վճարման սկզբունքն այնքան էլ պարզ չէ, քանի որ ձիթանքի հարկից կէս լիտր տրվել է Եկեղեցուն և մեկ լիտր՝ հասարակաց /գյուղի բնակչիներին/:

Մեր կարծիքով ձիթանքի հարկին է վերաբերում նաև Կարբիի հաղթակամար-Եկեղեցու հարավային պատին 1338 թ-ից հետո փորագրված արձա-

<sup>29</sup> Մեր հավաքածոյից:

<sup>30</sup> Տե՛ս Յով. Եպիփ. Շահնահարունեաց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Սայր Աթոռ Սուլր Էջմիածն, 2014, էջ 386:

<sup>31</sup> Մեր հավաքածոյից:

<sup>32</sup> Հ. Ղևոնդ Ակիշան, նշվ. աշխ., էջ 21–22:

<sup>33</sup> Գ. Կարախանյան, Դսեղի միջնադարյան ձիթանքը և նրա շինարարական արձանագրությունները: ՊԲՀ, 1977, 4, էջ 251–254:

<sup>34</sup> Կ. Ղաֆարայիան, նշվ. աշխ., էջ 81:

նագրությունը. «Կամաւն Ա/ստուծոյ/, ես՝ Երանաւս, Կարբոյ տանուտէրս շինեցի ձիթահան եւ Ետու ս/ուր/թ Աստուածածնիս յամէն դրքէս չարէք ձէք»<sup>35</sup>: Միջնադարյան ձիթահանը կարող էր մի քանի դիրքից լինել: Դիրքն այն տեղն էր, որտեղ տեղավորված էր ձիթահատիկները ճզմելու և ձեթը քամելու հարմարանքը, մամլիչը: Երանոսի արձանագրությունից պետք է հասկանալ, որ նա Եկեղեցուն ամեն դիրքից որպես հասույթ տվել է չարէք ձեթ: «Չարեքը» փոխառնվել է պարսկերենից և, ըստ «Վաստակոց գրքի», նշանակում է քառորդ, մի բաժին ի չորից<sup>36</sup>: «Ենուկների դեպքում մեկ չարեքը նշանակում է չափի որոշ միավորի՝ դրոյլի մեկ քառորդը: Չարեքը օգտագործվել է նաև որպես ընդեղեն բույսերի չափի միավոր, բայց այս դեպքում հավաստի է, որ Երանոսը Սուրբ Աստվածածնին տվել է ձիթահանքի յուրաքանչյուր դիրքի հանույթի մեկ չարեքը՝ մեկ քառորդ դրոյլ ձեթ:

Վաչուտյանների փոխարքայությունում գտնվող Օշական գյուղի Եկեղեցում Յով. Շահիսարունեանցն անցյալ դարի 30-ական թվականների վերջին ընդօրինակել է մի քանի արձանագրություն, որոնք այժմ ծածկված են ծեփով: 1286 թ. պարոն Սահմադինի ողորմածությամբ /համաձայնությամբ/ Ստեփանոս ձեռնավոր և Վահրամ Քեթրաբարը «թողաք զյօշականու քահանայից զինչ որ հարկ կայր այգոյ, բամբակի»<sup>37</sup>: 1288-ին նույն Սահմադինի և իր որդինների՝ Ամիրեկի և Հազարբեկի օրոք «.... Ես՝ Գէ մարդս էյի ամիրայ եւ Հաւիկս ձեռնաւոր՝ թողաք զՍ/ուր/թ Կարապետին այգեացն զյօշականու, զՄիրինու զձեռնաւորին զյարկմ զինչ որ կայր»<sup>38</sup> /կիաստորեն, Գեշմարդ ամիրան և Հավիկը, Օշականի ու Մրանա այգիներից հրենց օգտին սահմանված ձեռնավորի հարկը թողել են Սուրբ Կարապետին՝ Հովհաննավանքին/: Ավելի քան մեկ տասնամյակ անց՝ 1295 թ-ին, նույն պարոն Սահմադինի որդի Ամիրեկի որոի Բէտուբայը «թողի զյօշականու զիեսարայ զիարկն, զգեղիս և զվանորայից»<sup>39</sup>:

Վերը դիտարկված օրինակներում Վաչուտյանների փոխարքայությունում հիշատակվեցին Զաքարյան Հայաստանի և մոնղոլական տիրապետության շրջանի հարկային ինստիտուտները՝ շարիատ, ղալա, փասգինի, խարձ, ձիթալախ, ձեռնավորի հարկ, շահնահակ, հորահակ կտաւն, ձիթանքի հարկ, կոռ: Ինչ խոսք, շրջանառության մեջ էին նաև ավելի վաղ ժամանակներից հիշված այնպիսի հարկային ձևեր, ինչպես կապիճը, հողադրամը, կնքադրամը, ձեռնադրելու, տնօրինեքի, պասակի դրամը և այլն:

Թվարկված հարկերին զուգահեռ, պետք է նկատի ունենալ և այն հարկերը, որոնք թեև այստեղ չեն հիշված, բայց այդ ժամանակ շրջանառության մեջ էին Հայաստանում և Այրարատի կողմնակալություն-փոխարքայության հարեւան գավառներում: Սահիբ Դիվանի և Խոչաքի որդի, աթարեկ Ավագ Զաքարյանի թոռ Զաքարէ Դ-ն Բջնիի Եկեղեցու պատին 1325-ին փորագրած արձանագրությամբ իր տիրույթների բնակիչներին ազատել է որոշ հարկերից և արտոննել. «Ես՝ Զաքարէ... ի վեր կալայ որ Բջնի այլ մարդոյ տիրութիւն չլինի եւ թողի զամէն հարկ՝ զամիրայիհակն, զիարսանիհակն, զկովայիհամարն,

<sup>35</sup> Մեր հավաքածոյից:

<sup>36</sup> Գիրք Վաստակոց, Վենետիկ, 1877, էջ 256:

<sup>37</sup> Յով. Եպիս. Շահիսարունեանց, նշվ. աշխ., էջ 258:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 258–259:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 258:

գկալայթաղարն, զսայիին սպիտակն, զմահկամէն...»<sup>40</sup>: Այս նույն Զաքարե Դ-ն և իր մայր Խոչաքը 1291 թ. Գառնիի հեթանոսական տաճարի մուտքի պարակալին փորագրված արտոնագրով հայտնել են. «Գիր տուաք Գառն մեր սեփական հայրենացն, որ եզն :ԺԱ: սպիտակ շարիատ էր եւ .Հ: ոչխարն :Ա: բայախահակ, եւ մե/ն/ք վերուցաք զայս հարկ, ազատեցաք զեզն եւ զոչխար յամենայն հարկաց»<sup>41</sup>:

Անի Առաքելոց վանքի գավթում Աղբուղա Բ Զաքարյանը 1301 թ. արտոնագրել է. «Ես՝ Աղբուղայս ... թողի զեզինն հազրն, զկովին համբրելէն, գոշխարին աղիհակն»<sup>42</sup>:

1296 թ. Հռիփսիմեի տաճարի հարավային ավանդատան պատին փորագրված արտոնագրով տեղի իշխանավորների կողմից վերացվել է վանքից առնվոր բամբակի շարիատ հարկը, ինչպես նաև շահնայի /հարկահանի/ օգտին հավաքվոր բամբակի հարկը. «.... թողաք զՀռիփսիմուցս զբարակին շարիատն եւ զշահնային բարակի հակն»<sup>43</sup>:

Բջնիի և Անիի քննարկվող արձանագրություններում հիշատակված հարկերը հավասարապես ընդհանուր էին նաև Վաչուտյանների կողմնակալություն-փոխարքայության համար: Դրանք գանձվել են՝

**ամիրահակը՝** քաղաքապետի օգտին,  
**հարսանիկակը՝** տեղական աշխարհիկ իշխանավորների օգտին,  
**կովայիհամարն** կամ կովին համբրելէն՝ խոշոր եղերավոր անասունների գլխաքանակի համար,  
**բայախահակը՝** իշխանական արոտներում անասուններ արածացնելու համար,  
**աղիհակը՝** տեղական կալվածատերերի օգտին՝ նրանց պատկանող փարախներում, արոտավայրերում կամ մակաղատերերում անասուններ պահելու համար,  
**շահնահակն՝** հարկահանի օգտին<sup>44</sup>:

Բջնիի արձանագրության կալայթաղար հարկատեսակը Լ. Բաբայանը մեկնաբանել է որպես կալերից /կալատեղից/ վերցվող թաղար-հարկ<sup>45</sup>:

Վերը բերված արձանագրություններում նշված են նաև սայլի, եզի համար անվանված հարկերը:

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, մեկ կամ մի շարք հարկեր վերացնելու մասին արտոնագրերը հիմնականում փորագրվել են 13-րդ դարի վերջերին և 14-րդ դարի առաջին կեսին, այսինքն՝ իշխանության հոգեվարքի շրջանում: Մինչդեռ այս և սրանց գուգակեր հիմնական պետական հարկերը՝ մայլ /հողահարկ/, ղվիզուրը<sup>46</sup> /գլխահարկ/, տղղում /պաշտոններության համար գանձվող հարկ/, թաղարը<sup>47</sup> /բանակի պահպանման համար գանձվող հարկ/ մեկուկես հարյուամակից ավելի կենեքել ու կործանման են հասցել հայ ժողովրդին: Այս ամենին պետք է գումարել նաև 13-րդ դարի վերջին կյանքի

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 183: Նաև՝ Վիմական տարեգիր, կազմեց՝ Կ. Կոստանյանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 227:

<sup>41</sup> Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի, հ. 3, Եր., 1962, էջ 45:

<sup>42</sup> Դիվան հայ վիմագրության, 1-ին պրակ. Անի քաղաք, կազմեց Հ.Ա. Օռբելին, Եր., 1966, էջ 28:

<sup>43</sup> Ս.Ավագյան, Վիմագրական արձանագրությունների բառաքննություն, էջ 154:

<sup>44</sup> Տես նույն տեղը, էջ 38, 154–176:

<sup>45</sup> Տես Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 485:

<sup>46</sup> Տես Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 374:

<sup>47</sup> Տես Մաղաքիայ աբեղայի Պատմություն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 10:

կոչված, բայց 1307 թ. Ուլցեյթու-Մուհամմեդ խանի ժամանակ վերականգնված ջիզա-խարաջը /քրիստոնյա ժողովուրդներից գանձվող հարկը/, որ նոր հարված էր հայ ժողովորդին: Գրիգոր Եպիսկոպոս Կարնեցու կենսագրականում /1321/ այս առթիվ գրվել է. «....Եղին հարկս ի վերայ քրիստոնէից և յամենայն գլխոյ առնուին էօթն ութ դահեկան՝ յամենայն ամի, կամ ուրանալ զՔրիստոս, կամ տալ զդահեկանն :է: Խարաճ...: ... յերկոտասանամեայ մանկանէ առնուին զհարկն. և բազումք տարագիր եղեալ վասն հարկին....»<sup>48</sup>:

Դաժան հարկահանությունը ստիպում էր մարդկանց հարկի դիմաց վաճառել հարազատ զավակին, նաև ստիպում էր լքել հայրենի բնօրիանն ու հեռանալ այլ երկրներ:

Պատմիչ Մաղաքիա աբեղան գրել է. «Եւ յամենեցունց պահանջեալ խստագոյն հարկս, աելի քան զկար մարդոյն, սկսան չքատրիլ. և նեղէին անհնարին կտտանօք և չարչարանօք և գելոցօք: Եւ որ թաքչէր՝ ըմբռնեալ, սպանանէին, և որ ոչ կարէր հատուցանել զսակն զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն....»<sup>49</sup>:

Թեղենյաց վաճքում 1295-ին ընդորինակված Ավետարանի գրիչ Դավիթն իր իիշատակարանում գրել է. «Բայց գրեցաւ սա ի թվիս Հայոց Զև՛ /1295/, ի յաւուրն նետողաց ազգի, որ բռնացել ունէր զամենայն աշխարհս Հայոց և զայլս բազումս, որում չեն բաւական պատմել զդառնութիւն և զաւերութիւնն աշխարհիս, որ իբրև զօնվ խռովել մրրկածին աւով գերեքալեանն բերելով զննանութիւն, ուր ոչ երկիր, և ոչ քաղաք, և ոչ գեալ, և ոչ աւանք, և ոչ հրաշազան վաճորեայք զխաղաղութիւն գտեալ....»<sup>50</sup>.

Գրեթե նույնպիսի մի իիշատակարան էլ 1310 թ. Հովհաննավանքում արտագրած «Ավետարանի» 311թ էջում թողել է Սարկավագ գրիչը. «Բայց զաղետ և զորդ տարակուսանացս ո՞ պատմեսցէ, զի ի խիստ և յանհնարին հարկապահանջութենէ ծախեալ/ լինին ուստերը և դստերը աշխարհիս մեր և բազում գեղք և վանորայք աւէր և անհանգիստ և քահանայք տարաշխարհիկ լինին»<sup>51</sup>:

Հպատակ ժողովուրդների՝ հատկապես հայ ժողովորդի համար ստեղծելով սոցիալ-տնտեսական ծանրագույն պայմաններ, բռնելով ժողովորդին և նրա իշխանական տներին ծովելու-ուժացնելու ձանապարհը՝ 13–14-րդ դարերում մոնղոլ տիրողները երազում էին ոչնչացնել հայ ժողովորդին, որը, սակայն, ինչպես նրանց, այնպես էլ նրանցից հետո եկածներին չհաջողվեց:

### Օպտագործված գրականություն

1. Տետրոյանց, Զաքարյանների անկախ պետականությունը: Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, 2-3 /31-32/, 2017: Նոյնի, Այրարատյան կողմնակալության-փոխարքայության հանձնումը Վաչէ Ա Վաչուտյանին: Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ հայագիտական հանդես, 3 /37/, 2017: Նոյնի, Քուրո Ա. Վաչուտեան: Անձը եւ գործը: Բազմավէպ հայագիտական-քանասիրական-գրական հանդես, Վենետիկ-Ս. Ղազար, 3-4, 2014: Նոյնի, Այրարատյան կողմնակալություն-փոխարքայության հոգևոր կենտրոնները, «Էջնիածին»,

<sup>48</sup> Հայոց նոր վկաները, աշխ. Հ. Սամանյանի, Հ. Աձառյանի, Կաղարշապատ, 1903, էջ 121–122:

<sup>49</sup> Մաղաքիա, նշվ. աշխ., էջ 22:

<sup>50</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժգ դար, կազմեց՝ Ա. Ս. Մաթևոսյան, Եր., 1984, էջ 769:

<sup>51</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Եր., 1950, էջ 66:

- Զ, 2017: Նոյեմբի, Սաղմոսավանքի գրացուցակի գրվելու ժամանակը, «Լրաբեր հաս. գիտ.», 1, 1981: Նոյեմբի, Վաշուտյան իշխանական տան տոհմ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1981: Նոյեմբի, Թեղենյաց Վանքը և նրա առաջնորդները, «Էջմիածին», Ը, 1977: Նոյեմբի, Վաշուտյանների իշխանական տան Եկեղեցաշինական գործունեությունը, «Էջմիածին», Թ-Ժ, 1977: Նոյեմբի, Սատվածընկալի վանքը, «Էջմիածին», Գ, 1981:
2. Շահինյան Ա., Կոչի կոթողը և նրա արձանագրությունը, «Պատմաբանափրական հանդես», 1968:
  3. Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Եր., 1948:
  4. Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Եր., 1977:
  5. Ավագյան Ս., Վիճական արձանագրությունների բառաքննություն, Եր., 1978:
  6. Գրիգորյան Գ.Մ., Սյունիքը Օրբելյանների օրոք /13-14-րդ դարեր/, Եր., 1981:
  7. Միսիքար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ՝ Խոսրով Թորոսյանի, Եր., 1975:
  8. Մանանյան Հ., Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, հ. 2, 1928:
  9. Բարյայան Լ., Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13-14-րդ դարերում, Եր., 1964:
  10. Պետրոսյանց Տ., Ապարանի շրջանում ստեղծագործած միջնադարյան ճարտարապետությունը և քարագործ վարպետներ: «Երիտասարդ գիտաշխատող» /Երևանի պետական համալսարանի հանդես/, 1, 1981:
  11. Պետրոսյանց Տ., Չովունիի արձանագրությունները: ՊԲՀ, 3, 1980:
  12. Ավագյան Ս., Վիճական պրատուններ, Եր., 1986:
  13. Եսայի Նշեցի, Մեկնութիւն մարզարէին Եգեկիէի, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 3120:
  14. Երվանդ Շահազիզ, Աշտարակի պատմությունը, Եր., 1987:
  15. Յով. Եպիս. Շահինաթունեաց, Ստորագրութիւն Կաթոլիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014:
  16. Կարախանյան Գ., Ղաւդի միջնադարյան ծիրակնը և նրա շինարարական արձանագրությունները: ՊԲՀ, 1977:
  17. Գիրք վաստակոց, Վենետիկ, 1877:
  18. Վիճական տարեգիր, կազմեց՝ Կ.Կոստանյանց, Ս.Պետերբուրգ, 1913:
  19. Առաքեյան Բ., Կարախանյան Գ., Գառնի, հ 3, Եր., 1962:
  20. Դիվան հայ վիճագրության, 1-ին պրակ, Անի քաղաք, կազմեց Հ.Ա. Օրբելին, Եր., 1966, էջ 28:
  21. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961:
  22. Սաղարիայ արեւայի Պատմութիւն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870:
  23. Հայոց նոր վկաները, աշխ. Հ. Մանանյանի, Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903:
  24. Հայերեն ձեռագրերի իշխատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա.Ա. Մաթևոսյան, Եր., 1984:
  25. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի իշխատակարաններ, կազմեց Լ.Ս. Խաչիկյանը, Եր., 1950:

## ТИГРАН ПЕТРОСЯНЦ

Директор научной библиотеки АГПУ  
имени Х. Абовяна

**Налоговые отношения в Айраратском наместничестве.**— Освобождение в 1190–1200 гг. Закарянами Айраратской провинции, основание там наместничества Айрата и его передача Вачутянам означали установление новых социально-экономических и правовых отношений. Регион около полутора веков находился под сельджукским игом и изнемогал от тяжести налогов. После освобождения в регионе были установлены новые правовые отношения также и в сфере налоговой политики. Данных о налогах в предыдущий период и после освобождения от сельджукского ига нет. Скудные сведения о некоторых видах налогов сохранились в литографиях той эпохи. В статье рассматриваются сведения, касающиеся видов налогов.

**Ключевые слова:** Закарянская Армения, наместничество Айрата, Закаре II, Вачутяны, Ваче I, Курд I, Мхитар Гош, Парпи, Ованаванк, Ошакан, Карби, налоги, налоговая уступка.  
JEL: Y8, Y80, Y9

## TIGRAN PETROSYANTS

Director of the Scientific Library of  
ASPU after Kh. Abovyan

**Tax Relations in Ayrarat Governorate.**— The liberation of the Ayrarat Province by the Zakaryants in 1190–1200, the establishment of the Ayrarat governorate there and its transfer to the Vachutyants meant the establishment of new socio-economic and legal relations. For about a century and a half the region was under the Seljuk yoke and was exhausted because of the severity of taxes. After liberation, new legal relations were established in the sphere of tax policy in the region. There are no data on taxes in the previous period and after liberation from the Seljuk yoke. Poor information about certain types of taxes has been preserved in the lithographs of that epoch. The article deals with the information concerning types of taxes.

**Key words:** Zakaryan Armenia, the Ayrarat governorate, Zakare II, the Vachutyans, Vache I, Kurd I, Mkhitar Gosh, Parpi, Hovannavank, Oshakan, Karbi, taxes, tax concession.  
JEL: Y8, Y80, Y9